

թիւնսիրի մէջ հոգեկան մեծ հաճոյք է զգում, այդ կրօնի ազդեցութիւնն է, որ նպաստում է նրա կրքերի հանգստութեանը, որոնք մարդու շուտով են գրաւում շրջապատող անձնաւորութիւնների հետ յարաբերական դրութեան մէջ մտնելու:

Եզրիդին պաս չի պահում, նա ծովապահութիւնը և պասը համարում է փարիսեցիութիւն: Ամբողջ տարուայ ընթացքում Եզրիդին միայն երեք օր է ծով և պաս պահում, այն ևս ի պատիւ Սուրբ Սարգիս զօրավարի, որպէս արիութեան հերոսի, իսկ չորրորդ օրը հանդէս են կատարում, ձիարշաւը և մականախաղը առաջին տեղն են բռնում, իւրաքանչիւրը աշխատում է իւր ամբողջ ոյժով փայլել, խլել յաղթական դրօշակը, աւելի պարծանքով յիշելու Ս. Սարգիս քաջագործ անունը:

Մահմեդական քրդերը մի և նոյն պասը պահում են երեսուն օր, այդ պատճառով Եզրիդիների և Մուսուլման քրդերի մէջ անվերջ կռիւներ ու վէճեր են յառաջանում. երկու տարրից մէկը—Մահմեդականը, պնդում է թէ պէտք է պաս պահել ար ոօժ (երեսուն օր) իսկ Եզրիդին հաստատում է, պէտք է պահել սե (երեք) ոօժ: Հաւանական է կարծել, որ դրանց մէջ տեղի ունեցող հակառակութիւնը «Սի և Սէ» նմանաձիւն բառերից է յառաջացել (Նարոնյակի/ի) Սիւսիլ քննյ. Զափաւանց

Հ Ե Ր Ո Վ Դ Ի Ա Դ Ա *

(Գուստաւ Փլօրների)

III.

Արքունիքը լի էր խնջոյքի համար եկած հիւրերով:

Խնջոյքի սեղանը բացուած էր երեք սրահներում. նոցա միջից շարքերով գնում էին փշածառի փայտից սեւեր բրոնզեայ խոյակներով և քանդակներով զարդարուած. երկու իրար կտրող միջանցքների կամարները յենում էին նրանց վերայ, իսկ երկուքը՝ ամբողջապէս ոսկեզօծ, ձկնում էր դէպի խորքը և յենում դիմացի ահագին կամարի վերայ, որ կախուած էր հանդիպակաց ծայրում:

Զահերը, որոնք դրուած էին սեղանների երկարութեամբ, պլպլում էին ինչպէս խորոյկներ, նկարէն կճեայ ամանների, պղնձեայ սկուտղների, քառակուսի ձիւնաշերտերի և խաղողի ողկոյցների մէջ. նոցա կարմիր արագցոյլքը ցրուելով, հանգչում էր քարձրում և կրակները փայլում էին ինչպէս գիշեր ժամանակ

*) Տես սոյն Թիւ օգոստոս-սեպտեմբեր համարը:

աստղերը ծառերի ձիւղերի արանքից: Սրահի լայն բացուածքից երևում էին կերոնները, որոնք վառուում էին տների տանիքներում: Անտիպան կամենում էր, որ այս օրը տօն լինի իւր բարեկամների, ժողովրդի և բոլոր հրաւիրուածների համար:

Սարուկները թաղիքէ սանդալներով, շան նման հաւատարիմ, պտտում էին սեղանների շուրջը մատուցարանը ձեռքներին:

Պրօկոնսուլի սեղանը գտնուում էր ռսկեզօծ պատշգամբում վայրի ձիթենի տախտակամածի վերայ: Բարելոնից բերուած գորգերը նրա վերայ կազմել էին մի տեսակ վրան:

Իիթելիոսի, նրա որդու և Անտիպայի համար դրուած էին երեք գահաւորակ փղոսկրից: Պրօկոնսուլը բազմած էր ձախ դռան մօտ, Աբղոսը աջ, Տետրարիւը մէջ տեղում:

Տետրարիւը հագել էր ծանր սև թիկնոց, ամբողջովին ծածկուած գունաւոր ծաղկանկարներով. նրա այտերը մնգուրած էին, մօրուքը փռուած հովհարի նման, մազերը ծածկուած էին կապտագոյն փոշիով, թանկագին քարերով ընդելուզած թագը շողշողում էր ճրագի լոյսի տակ: Իիթելիոսը հագել էր վուշեայ թիկնոց, որի ճիրանագոյն կապի փնջերը ուսերի վրայից տարուած էին դէպի թիկունքը: Աբղոսը հրամայեց թիկունքին կապել իւր մանիշակագոյն մետաքսեայ հագուստի թնոցները, որոնք գործուած էին արծաթաթելով: Նրա խոպուպները բարձրանում էին ալիքանման: Պորփուրեայ մանեակը փայլում էր նրա կրծքի վերայ, որը իւր սպիտակութեամբ և գերութեամբ նմանում էր կնոջ կրծքի: Նրա կողքին փսիաթի վերայ ծալապատիկ նստած էր մի սիրուն երեխայ, որ ամբողջ ժամանակ ժպտում էր: Աբղոսը նրան նկատեց խոհանոցում և իւր մօտից բաց չթողեց, նա նրան անուանում էր ասիացի, չկարողանալով յիշել նրա քաղղէական անունը: Ժամանակ առ ժամանակ Աբղոսը պառկում էր գահաւորակի վերայ և նրա մերկ ոտները այն ժամանակ իշխում էին հանգիստականների վերայ:

Այլ կողմում բազմած էին քահանաները և Անտիպայի զօրավարները, երեսադէմի բնակիչները և յունական քաղաքների նշանաւոր անձերը: Ձախ կողմում՝ Պրօկոնսուլից ցած՝ Մարցելը հարկաժողովների հետ, Տետրարիւի բարեկամները և Կոնսայից, Պտղոմիայից և Երիթրովից հրաւիրուածները, ապա մէջընդմէջ նստած էին Լիբանոսի լեռնականները և Հերովդէսի ծեր զինուորները, տասն և երկու Թրակացիներ, Գալլեր, երկու Գերմանացի—վայրի այծերի որսորդներ, Իդուեմէացի հովիւներ, Պալմիրի սուլթանը և Էգիօնգաբերի տաւաստիները: Ամէն մէկի առաջ դրուած էր փափուկ խմորի քացիկ, որով նոքա սրբում էին իրանց մատները. նոցա ձեռքերը ձգւում էին ինչպէս բազէի վիզ, վերցնում էին ձիթապտուղ, Ֆըստուղ, նուշ: Ամէնքի դէմքը փայլում էր ուրախութիւնից. ծա-

դիկներէյ հիւսած պսակները զարդարում էին նրանց գլուխները։ Փարխեցիները զրանցից հրաժարուեցին, որպէս հոգովէական պղծութիւն։ Նոքա սարսափում էին, երբ նոցա վերայ ցընցում էին խէժի և կնգլտեկի խառնուրդը, որ գօրծագրւում էր միայն սրբազան ծէսերի ժամանակ։

Արդոտը նրանով տրորեց իւր թեւերի տակը և Անտիպան խոստացաւ տղարկել նրան ամբողջ երեք զամբիւղ այս դմուռից, որը մի ժամանակ կղէտպատրային գրգռել էր Խրիել Պաղէստինին։

Տեսրարթի յետևում սեղաւորուել էր Տրեքիոսի բերդապահ զօրքի հրամանատարը, որը հէնց նոր եկել էր Մարխերուս, որ նրան հաղորդի մի արտասովոր դէպք։ Բայց սորա ամբողջ ուշադրութիւնը կենդրոնացել էր Պրակոնսուլի վրայ և այն բանի, թէ ինչ են խօսում միւս սեղանների մօտ։

Այնտեղ խօսում էին Յովաքանանի և նրա նմանների մասին։ Բետացի Արմոնը արբում էր մեզքերը կրակով. իսկ մի ոմն Յիսուս . . .

— Դա ամենից վատն է, բացականչեց Նղիազարը, զա անամօթ խաբեբայ է։

Յանկարծ ոտքի կանգնեց մի ինչ որ մարդ, որ նստած էր Տեսրարթի յետևում, գունատ ինչպէս նրա քղամիդի երիզները, նա իջաւ տախտակամածից և գոռաց փարիսեցիներին՝ երեսն ի վար։

— Դուք սուտ էք խօսում. Յիսուսը հրաշքներ է գործում։

Անտիպան կամենում էր տեսնել Յիսուսին։

— Իզուր դու նրան քեզ հետ չբերիր։ Ի՞նչ գիտես նրա մասին։

Այն ժամանակ նա, նրան կոչում էին Յակովբ, պատմեց թէ ինչպէս նա գնաց Կափառնայում, որպէսզի խնդրի Ուսուցչին որ բժշկի իւր հիւանդ աղջկան։ Ուսուցչիչը պատասխանեց նրան. «Դարձիր քո տունը, աղջիկդ առողջ է»։ Եւ տեսաւ իւր աղջկան շէմքի վերայ. նա մահճից վեր էր կացել այն ժամանակ, երբ արևի ժամացոյցը ցոյց էր տալիս երրորդ ժամը, հէնց այն ժամը, երբ ինքը մտել էր Յիսուսի մօտ։

Ի հարկէ, գոյութիւն ունեն կախարդական խոտեր, հակաճանկեցին փարիսեցիները։— Եւ մինչև անդամ այստեղ, Մարխերուսում գտնուում է երբեմն բաարաս, որ դարձնում է մարդուն անխոցելի. բայց բժշկել առանց շփուելու հիւանդին, մինչև անգամ նրան չտեսած, դա անկարելի բան է, եթէ միայն Յիսուսին չեն օգնում դեկրը։

Եւ զրանցից յետոյ Անտիպայի բարեկամները, Գալիլէի զօրականները գլուխները շարժելով կրկնեցին.

— Այս, պարզ է, նրան դեկրն են օգնում։

Յակովբը նոցա սեղանների արանքում կանգնած լուռ էր. գլուխը բարձր, բայց հեզ դէմքով։

Նոքա ստիպեցին նրան խօսել:

— Ապացուցիր մեզ, որ նա կարող է հրաշքներ գործել:

Յակովբը բոլորովին կորացաւ և ցածր, դանդաղ ձայնով, կարծես վախենալով իւր սեպական ձայնից, արտասանեց.

— Մի՞թէ դուք չգիտէք, որ դա Մեսսիան է:

Քահանաներն սկսեցին իրար նայել: Բիթելիոսը խնդրեց քացատրել այդ բառի իմաստը: Նորա թարգմանը պատասխանեց մտածելով. նոքա այդպէս են կոչում այն ազատարարին, որը պիտի տայ նոցա աշխարհի բոլոր բարիքը և հաստատի նոցա իշխանութիւնը բոլոր մնացած ազգերի վերայ: Մի քանիսը նոյն իսկ պնդում են, որ պիտի դան երկու Մեսսիաներ. առաջինը կյաղթուի Գոգ Մագոգից, հիւսիսի սաղայէլեաներից, բայց երկրորդը կոչնչացնի Չարի իշխանին, և ահա շատ դարեր նոքա ամէն բոլոր սպասում են նորա գալուն:

Քահանաները խորհրդակցում էին իրար հետ. առաջինը խօսեց եղիազարը:

— Ամենից առաջ Մեսսիան պիտի լինի Դաւթի որդին, և ոչ հիւսնի: Նա պիտի հաստատի Օրէնքը, իսկ այս նազարէթացին կամենում է այն խորտակել. և բացի այդ, և այս ամենազլիսաւորն է, նա պիտի ունենայ նախակարապետ, եղիա մարգարէն:

Յակովբը պատասխանեց.

— Եղիան արդէն եկել է:

— Եղիան, եղիան, անցաւ այս անունը ամբոխի միջով մինչև սրահի ծայրը:

Եւ ամենքը երեւակայեցին ազնուների երամ, շրջապատած ձերուհուհու, կայծակ, որ այրում է զոհարանը, հեթանոս քուրմեր, որ ընկնում են հեղեղի մէջ, սրահի կանայք, յիշեցին սարեպտացի այլի կնոջը:

Յակովբը շարունակեց պնդել, որ նա ճանաչում է Նախակարապետին: Նա նրան տեսել է, ժողովուրդը՝ նոյնպէս:

— Ասա նորա անունը:

Այն ժամանակ նա աղաղակեց բոլոր ուժով:

— Յովաքանան:

Անտիպան յետ ընկաւ. կարծես մէկը նրա կրծքին խփեց: Սաղուկեցիները յարձակուեցին Յակովբի վրայ, եղիազարը սկսեց ճողովարանել, պահանջելով, որ իրեն լսեն:

Երբ լռութիւնը տիրեց. նա փաթաթուելով իր թիկնոցով դատաւորի նման, սկսեց Յակովբին հարցեր տալ:

— Մարգարէն միտաւ:

Ամբոխի քթմեջիւնը ընդհատեց նրան, հաւատում էին, որ եղիան միայն անհետացել է:

Դա Եղիազարին կատաղեցրեց. սակայն նա շարունակեց իւր հարցումները.

— Եւ դու կարծում ես, թէ նա յարութիւն է առել:

— Ինչո՞ւ դու այդպէս ես ընդունում, ասաց Յակովբը:

Սաղուկեցիներն սկսեցին ուսերը վեր քաշել: Յովնաթանը չոփով աչքերը քրքջաց իրրե ծաղրածու. միթէ մարմինը կարող է ապրել յաւիտեան. ինչ անհեթեթութիւն. և նա արտասանեց Պրօ-կոնսուլին ժամանակակից բանաստեղծի ոտանաւորը.

Nec crescit, nec post mortem durare videtur.)*

Յանկարծ Արդոսը փորը բռնելով թեքուեց գահաւորակի տակ. քրտինքի կաթիլներ երևացին նրա ճակատի վերայ, դէմքը կանաչեց:

Սաղուկեցիները վախեցած ձևացան, միւս օրը նոցա շնորհուեց ղոհաբերութեան իրաւունք, Անտիպան յուսահատուած էր թւում, Բիթելլիոսի դէմքի վրայ ոչ մի մկան չշարժուեց, թէև խիստ յուզուած էր. որդուց զրկուելով նա կղքկուէր Կեսարի բոլոր ողորմածութիւններէից:

Արդոսը դեռ չէր գաղարել սիրտը յետ տալուց, երբ կրկին կամեցաւ ուսել:

— Ինչ մի բան տուէք. փոշիացրած մարմար, նակսոսեան թերթաքար, կամ ծովի ջուր: Ես կարող եմ վաննա ընդունել:

Նա սկսեց կրծել ձիւնի կտոր և ապա ուտել մեղրի մէջ թաթխած դդում, հրաժարուելով կարկանդակներից և վարդապոյն ճարեկներից: Ասիացին սքանչացմամբ նայում էր նրան. Արդոսի անկշտում շատակերութիւնը նրան թւում էր նշան ինչ որ գիւրագոյն էակի:

Եզի երկամունքներից յետոյ մօտ բերին, սոխակներ, սկիւռներ, խաղողի թուփով տօլմա: Քահանաները դեռ վիճում էին մեռելների յարութեան մասին: Ամմոնը, Նէօպոլտօնական փիլոնի աշակերտը, նոցա տեսակէտը համարում էր անմիտ և այդ մասին խօսում էր յոյների հետ, որոնք ծաղրում էին պատգամախօսներին: Մարցելը ու Յակովբը զրուցում էին: Առաջինը պատմում էր այն երանութեան մասին, որ նա ունի այն օրից, երբ հաւատաց Միտրային, իսկ Յակովբը համոզում էր նրան Յիսուսի հետևող լինել: Արմաւի, մոշի և ամենատեսակ անուշաբոյր գինիներ գետնի ման հոսում էին աքաջներից ամանների, իսկ այնտեղից բաժակների մէջ, որից և ածում էին կոկորդը. բոլորի լիզուն էլ բացուել էր: Սկսուեցին ազատ խօսակցութիւնները: Հրէա Եսսիմը բացարձակ յայտարարեց, որ նա երկրպագում է մոլորակներին: Ապակացի վաճառականը զարմացնում էր նոմադներին մանրամասն նկարագրելով Հեթոպոլիսի տաճարի հրաշքները: Նոքա հարցնում

էին այնտեղ գնալը որքան ծախք կ'վերցնէի։ Ուրիշները պաշտպանում էին ազգային կրօնը։ Կիսակոյր գերմանացին երգում էր Սկանդինաւեան թերակղզու դիւցազներգութիւնից, ուր երևում է աստուածների ճաճանչաւոր դէմքերը, իսկ Սիւքեմից եկածները հրաժարւում էին վայրի աղաւնու միս ուտել իշարգանս Ազիմոսի աղաւնիների։

Մի քանիսը զրուցում էին սրահի մէջ տեղում կանգնած, շնչառութիւնից և ճրագների ծխից մէզի նման մառախուղ կախուած էր օդի մէջ։ Պատի տակով անցաւ Փանուէլը, նա կրկին նայեց երկնքին, բայց չվստահացաւ մօտենալ Տետրարխին, վախեցնալով կեղտոտուել ամեն կողմ թափուած ձիթալտղի իւղով, որը յետեւնացիք համարում էին ամենամեծ սրբապղծութիւն։

Յանկարծ լսուեցին հարուածներ դռների վերայ։

Ժողովուրդն իմացել էր, որ Յովաքանանը բնաւարկուած է Մարիսերուսում։ Մարգիկ կելոններով բարձրանում էին նեղ կածանով. սև մասսան լցրել էր կիրճը. ժամանակ ժամանակ լսւում էր ամբոխի մոնչոցը. Յովաքանան, Յովաքանան։

— Նա ամեն տեղ խուլութիւն է սերմանում, ասաց Յովնաթանը։ Դրամները կ'կորցնեն իրենց արժէքը, եթէ նա կշարունակէ իւր քարոզները, աւելացրին փարիսեցիները։

Թափւում էին կշտամբանքներ։

— Պաշտպանիր մեզ։

— Պէտք է հաշիւը վերջացնել զրա հետ։

— Դու դաւաճանեցիր նախնիքներիդ հաւատքը։

— Դու էլ նոյնպիսի անաստուած ես, ինչպէս Հերովդէսն էր։

— Դուք էք անաստուածները, պատասխանեց Անտիպան, տաճարը հայրս է կառուցել։

Այն ժամանակ փարիսեցիները, աքսորեալների որդիքը և Մատաթիայի կողմնակիցները սկսեցին մեղադրել Տետրարխին նորա նախնիքների ոճրագործութիւնների մէջ։

Նոցանից մի քանիսի գանգը սեղմւում էր, մորուքը խուլւնկած էր, անդօր ձեռքերը զայրոյթից դողում էին. ուրիշները քիթը վեր քաշած, մեծ կոյու աչքերով նմանում էին տափակադունչ շներին։ Մօտ տաանկերկու ծառաներ և քահանաների զրազրեր, որոնք կերակրւում էին զոհաբերութեան մնացորդներով, հասել էին տախտակամածի մօտ. նոքա սպառնում էին Անտիպային դանակներով, նա համոզւում էր նոցա, իսկ սաղակեցիները պաշտպանում էին նրան, ի հարկէ մեծ մասամբ առերեսու։ Անտիպան նկատեց Մաննային և նշանացի հրամայեց հեռանալ։ Բիթեիտի դէմքը մնացել էր անվրդով—նա կարծես չէր նկատում անցած դարձա՞ծը։

Փարիսեցիները, որոնք մնացել էին իրանց զահաւորակի յետեւում, սարսափելի կատաղութեան հասան. նոքա ջարդեցին իրենց առաջ գտնուած ամանները. նոցա տալիս էին Մեկենասի սիրելի կերակուրը — զերբ մսի տապակած, միս, որ համարում էր անմաքուր:

Արդոսն սկսեց ծաղրել նոցա. նրան ասացին, որ նոքա յարգում են իշի զլուխը, նոքա չեն սիրում խոզի միսը, ի հարկէ նրա համար, որ խոզը սպանեց Բաքոսին, որին նոքա շատ են մեծարում. իզուր չէ, որ նոցա տաճարում գտել են խաղողի ոսկէ ճուղ:

Քահանաները նրան չէին հասկանում. Փինէյը, ծագումով Գալիլիացի, հրաժարուեց թարգմանել: Արդոսը բարկութիւնից իրեն կորցրել էր, նամանաւանդ, որ Ասիացին վախեցած անհետացել էր. խնձոյքը դուր չեկաւ Արդոսին. խորտիկները կոպիտ էին և բաւականաչափ համեմած չէին: Նա հանգստացաւ, երբ տեսաւ ասորական ոչխարների պոչերը, որ նման էին իւղի գնդի:

Հրէաները Բիթելիոսի մէջ զգուանք էին առաջացնում: Արդեօք նոքա Մոլոքին չէն երկրպագում, որի մեհեաններին նա հանդիպեց ճանապարհին. և նա մտաբերեց մանուկների մտին պատմուածքը, որոնց զոհ էին բերում և այն մարդու մասին, որին գերացնում էին ինչ որ գաղտնի նպատակներին համար: Նա որպէս իսկական հռովմայեցի, յուզուած էր նոցա անհամբերատարութեամբ, նոցա մոլեռանդ կատաղութեամբ և վայրագ յամառութեամբ: Պրօկոնսուլը կամենում էր հեռանալ, Արդոսը հրաժարուեց:

Թողնելով հագուստը մինչև ազդրները, նա նստեց կերակուրների ահագին կոյտի առաջ և չէր կամենում բաժանուել նոցանից, թէև մինչև կոկորդը լիքն էր:

Ամբոխի յուզումը աճում էր: Նախագիծ էին կազմում անկախութեան վերականգնման համար: Յիշում էին Իսրայէլի նախկին փառքը: Բոլոր տիրապետողները պատժուեցին, Անտիզոնը, Կրասսոսը, Վարոսը, . . .

— Լռեցէք, անպիտաններ, գոռաց Պրօկոնսուլը. նա հասկանում էր ասորերէն և թարգման պահում էր միայն նրա համար, որ լաւ մտածի իւր տալիք պատասխանը:

Անտիպան շտապով հանեց կայսեր պատկերով մեղալը և երկիւղածութեամբ նրան նայելով, սկսեց այդ ցոյց տալ ամբոխին:

Յանկարծ ոսկեայ սրահի դռները բացուեցին և մոմերի շլացուցիչ լոյսի տակ, շրջապատուած ստրուկներով, ծաղիկներով զարդարուած երեսաց Հերովդիազան. զլխին դրած ունէր ասորական խոյր, որի կապերը գնում էին ծնօտի տակով, մազերը օճանման ոլորուն թափուում էին նորա ծիրանիի վրայով թեքերի ամ-

բողջ հրկարութեամբ կտրուածքներով: Երկու քարեայ վիշապներ նման Ատրիտների գանձը պահպանողներին, գոռոզաբար կախուած էին դռներից. Հերովդիադան նմանում էր Սիբելին, շրջապատուած առիւծներով և բարձրացնելով բաժակը պատշգամբի ցանկից բարձր, որ բարձրանում էին Անտիպայի գլխավերեւը, նա բացականչեց.

— Կեցցէ Կեսարը:

Այս բացականչութեանը ձայնակցեցին Բիթելիոսը, Անտիպան և քահանաները:

Բայց յանկարծ ամբողջ սրահում լսուեց հիացման և սքանչացման ձայն: Ներս եկաւ մի ջահել աղջիկ:

Կապտաւուն շղարշը ծածկում էր նրա գլուխն ու կուրծքը: Նրա միջից կարելի էր տեսնել աչքերի գծագրութիւնը, ականջի քաղկիտեան քարէ օղերը և մարմարի նման մարմինը: Մոխրագոյն մետաքսեայ կտորը, որ գօտկում սեղմուած էր ոսկեայ կամարով, ծածկում էր նրա ուսերը: Նրա սև վարտիկը մարդախոտի ծաղիկներով էին զործուած. և զնում էր անհոգ քայլուածքով, տնկունկացնելով մանրիկ կօլիւրբի աղուամաղից շինած հողաթափներով:

Բարձրանալով տախտակամածի վերայ, նա հանեց իւր ծածկոցը, նա նման էր Հերովդիադային ջահել ժամանակ: Ապա նա սկսեց պարել:

Նա պարում էր սրնգի և գոյգ ծնծղայի հնչիւններով. նորա կլորիկ ձեռքերը մէկին կանչում էին, որ միշտ փախչում էր. նա հետապնդում էր նրան թիթեռնիկից աւելի թիթեռօքէն, ինչպէս Պսիխէա, որի մէջ վառուել է հետաքրքրութիւնը և թւում էր թէ ահա ուր որ է կ'ոչի:

Ծնծղաների յուզարկաւորութեան ձայներին փոխարինեցին բոժոժները: Յուսահատութիւնը փոխարինեց յոյսին: Վշտի հառաչը զգացւում էր նորա ամեն մի շարժման մէջ և ամբողջ ետեթիւնը արտայայտում էր այնպիսի յոգնածութիւն, որ չէր կարելի ասել արդեօք լալիս է նա մի որևէ աստծու մասին, թէ նրա փաղաքշանքներից ուժասպառ է եղել: Աչքերը կիսախուփ, նա պտտում էր իւր մէջքը, նրա փորը ակիքանման բարձրանում իջնում էր, ստինքները թրթոռում էին, ոտները անընդհատ շարժման մէջ էին, իսկ դէմքը կարծես քարացել էր:

Բիթելիոսը համեմատում էր նրան Մնեստերի ֆիլկատակի հետ: Արդոսի սիրտը կրկին խառնեց: Տետրարիւր կարծես զառանցում էր և մոռացել էր Հերովդիադային: Նրան այնպէս թուաց թէ նա մօտեցաւ սաղուկեցիներին: Տեսիլքը անհետացաւ:

Բայց սա տեսիլք չէր, Մարխերուսից հեռու Հերովդիադան կրթում էր իւր դուստր Սալոմէին այն յուսով, որ սա կգրաւի:

Տեորարխին և նա տեսնում էր, որ ծրագրերը յաջողում է:

Սալումէն կրկին սկսեց պարել. այժմ դա սիրոյ խելայեղ պոռթքումն էր, որ յազենալ է ուզում: Նա պարում էր ինչպէս Հնդկաստանի քուրմերը, ինչպէս Նուբէացի կանայք Նեղոսի ափերի, ինչպէս Լիբէական Բաքոսի քրմուհիները, նա շուտ էր գալիս ամեն կողմ ինչպէս փոթորկից օրօրուող ծաղիկ: Նրա աւանջները ադամանդները ցաթկաւում էին, ուտերի վերայի գործուածքը ստանում էր ամեն գոյն. նորա ձեռքից, ոտներից, հագուստից թափւում էին անտեսանելի կայծեր, որոնք այրում էին տղամարդկանց սրտերը: Քնարը հնչում էր. բացականչութիւններով պատասխանում էր ամբոխը: Ծունկերը չծալած ոտները հոկով Սալումէն կռացաւ այնպէս, որ նրա ծնօտը կպաւ յատակին. վաշկատուները, որոնք սովոր էին իրանց զսպել, անառակ հռովմէական զինուորները, ազահ հարկաժողովները, ծեր քահանաները, որոնք խորասուզուած էին վիճարանութիւնների մէջ, բոլորը քթածակերը ուռցրած գողում էին ցանկութիւնից:

Ապա նա փոթորկի նման սուրաց Սնտիպայի սեղանի շուրջը, ինչպէս կախարդիչ կաքաւող և ցանկական հեծկլտանքից ընդհատուող ձայնով Սնտիպան ասաց նրան.— Ինձ մօտ, ինձ մօտ: Նա շարունակեց պտոյտ գալ՝ թմբուկները խլացուցիչ կերպով էին հնչւում, ամբոխը գոռում էր, իսկ Տեորարխը բոլորից բարձր ու բարձր ասում էր. եկ ինձ մօտ, եկ ինձ մօտ. ես կտամ քեզ կափառնայումը, տիրերական հարթութիւնը, բոլոր իմ ամբոցները, ես կտամ քեզ կէս թագաւորութիւնս:

Նա յանկարծ կանգնեց ձեռքերի վերայ, և ոտները դէպի օդը բարձրացնելով հնաց այդպէս տախտակամածի վերայ ինչպէս մի ահագին ճպուռ. և ապա յանկարծ կանգ առաւ:

Նրա մէջքն ու ծոծրակը գոյացրին ուղիղ անկիւն: Գունաւոր վարտիքը, որ հագել էր ոտներին, ծիածանի նման իջնում էին նրա ուտերի վերայ, ծածկելով նրա դէմքը, որ յատակից մի կանգուն բարձր էր: Նրա շրթունքները ներկուած էին, յօնքերը գիշերից աւելի սև, նրա աչքերում կար ինչ որ սարսափելի բան, իսկ ճակատը նման էր սպիտակ խոնաւ մարմարի:

Սալումէն ոչինչ չէր խօսում և նոքա նայում էին իրար:

Մատերի չրիկոց լսուեց սրահում: Սալումէն վաղեց այնտեղ, կրկին եկաւ և քիչ կակազելով, մանկական ձևով արտասանեց.

— Ես կամենում եմ, որ դու տաս ինձ սկուտղի վերայ գլուխը...
Նա մոռացել էր անունը, բայց իսկոյն մտաբերեց, ժպտալով—
Յովաքանանի գլուխը:

Տեորարխը ընկաւ գահաւորակի վերայ շանթահարի նման:

Նա խօսք էր տուել. Ժողովուրդն սպասում էր:

Նա ինքն իրեն չի ազատիլ, եթէ Փանուէլի գուշակութիւնը մի ուրիշի վերայ կատարուի: Յովաքանաննը կարող է ազատուել, եթէ նա իսկապէս մարդարէ է, իսկ եթէ ոչ, ապա նորա մահը մի առանձին արժէք չունի:

Մաննային արդէն կողքին կանգնած էր: Նա գուշակեց Անտիպայի վճիռը:

Բիթելիոսը կանչեց նրան և յայտնեց պայմանախօսքը, որ նա պիտի ասէր փոսի պահապան զինուորներին:

Ամենքը թեթևութիւն զգացին: Մի բոպէի յետոյ ամեն ինչ վերջացած կլինի:

Բայց Մաննային ինչ որ դանդաղում էր:

Նա վերադարձաւ սարսափահար:

Արդէն քառուռն տարի նա դահլճ էր. նա ջրահեղձ էր արել Արիստաբուղոսին, խեղդել էր Աղէքսանդրոսին, կենդանի տըրել էր Մատաթիային, գլխատել էր Զոսիմոսին, Պապպուսին, Յովսէփին, Անտիպատրային, բայց նա չէր համարձակում սպանել Յովաքանանին: Նրա ատամները չխկչխկում էին, նա զոգում էր ամբողջ մարմնով:

Մաննային տեսել էր փոսի առաջ սամարացոց հրեշտակապետին, աչքերը խոնարհած, բոցեղէն ահադին սուրը ձեռքին: Նա բերել էր իր հետ երկու զինուորի, որոնք պիտի հաստատէին իւր ասածները:

Բայց նոքա ոչինչ չէին տեսել, բացի մի հրէական զօրավարից, որ յարձակուեց իրանց վերայ և իրանք սպանեցին նորան:

Հերովդիադան կատաղեց, փողոցային, արխնուռտ հայհոյանքների մի հեղեղ թափուեց նրա շրթունքից, նա իր եզունդները կտորատեց սրահի ցանկապատի վերայ և երկու քարեայ առնձները կարծես խածել էին նրան և նրա հետ մոնչում էին:

Անտիպան, քահանաները, զինուորները, փարիսեցիները— բոլորը անասելի աղաղակում էին նրա յետևից, պահանջելով վրէժ. նոցա ձայնակցում էին մնացածները, կատաղած այն բանից, որ իրանց հարկադրում են սպասել:

Մաննային դուրս եկաւ երեսը ձեռքերով ծածկած:

Հիւրերը էլ երկար սպասեցին քան առաջին անգամ: Վերջապէս դա ձանձրալի դարձաւ:

Յանկարծ պալատի անցքերի մէջ լսուեց քայլուածքի ձայն, ամենքը լռել էին տանջալից սպասողութեամբ:

Ներս բերուեց գլուխը: Մաննային ձեռքերն առաջ ձգած բերում էր գլուխը մազերից բռնած, հպարտ ամբոխի ծափահարութեամբ:

Ինելով սկուտղի վերայ, նա տուեց Սալոմէին:

Սալումէն արագ բարձրացաւ պատշգամբը, և մի քանի բոպէից յետոյ գլուխը կրկին բերուեց նոյն այն պատուի ձեռքով, որին Տետրարիս անուանեալ տեսիլ էր տան կտրանը, իսկ երեսկոյեան Հերովդիադայի սենեակներում:

Անտիպան յետ գնաց, որպէսզի չտեսնի Յովաքանանի գլուխը: Բիթելիոսը նրա վրայ ձգեց անտարբեր հայեացք:

Մաննային իջաւ տախտակամածից և սկսեց ցոյց տալ գլուխը հռովմի դօրապետներին և այն բոլորին, ով այնտեղ խնջոյքումն էր: Նոքա ուշադրութեամբ նայում էին գլխին:

Դանակի բերանը վերից վար սահելով հանդիպել էր ծնօտին. ջգածութիւնը ծռել էր բերանի անկիւնները. մօրուքը ամբողջովին արնաշաղախ էր. փակուած կոպերը թափանցիկ էին ինչպէս խիտնջի կեղև. ջահերը, որ պլպլում էին շուրջը, լուսաւորում էին գլուխը:

Գլուխը հասաւ քահանաների սեղանին: Մի ինչ որ փարիսեցի հետաքրքրութիւնից թեքեց գլուխը, բայց Մաննային կրկին ուղղեց և տարաւ Արդոսի մօտ, որն այդ ժամանակ զարթնեց: Յովաքանանի մեռած բիւրերը վայում էին արտեանունքների տակից և կարծես Արդոսի հանգած աչքերին ինչ որ բան էին ասում:

Ապա Մաննային սկուտղը դրեց Անտիպայի առաջ: Արտասուքը հոսում էր Տետրարիս աչքերից:

Կերօնները հանգան: Հիւրերը հեռացան սրահից. այնտեղ ոչ ոք չէր մնացել բացի Անտիպայից. քունքերը սեղմած ձեռքերի ափի մէջ նա նայում էր կտրուած գլխին և Փանուէլին, որը սրահի մէջտեղում կանգնած աղօթք էր մրմնջում ձեռքերը դէպի երկինք կարկառած:

Երբ արեւ դուրս եկաւ, երկու մարդ, որոնց Յովաքանան էր ուղարկել, կրկին երեւցին Մարիերուսում բերելով իրանց հատ ցանկալի լուրը:

Լսելով այն, Փանուէլը աննկարագրելի հրճուանք գգաց:

Ապա ցոյց տուեց սկուտղի վերայ գլուխը խնջոյքի մնացորդների մէջ. եկուորներից մէկը ասաց նրան.

— Միթարուիր, նա իջաւ մեռեալների մօտ, որ աւետի փրկչի գալուստը:

Հետեւեալին այժմ հասկացաւ թէ ինչ էին նշանակում Յովաքանանի խօսքերը. «Նա պէտք է նսեմանամ, որ նա փառաւորուի»:

Եւ երբեք միասին վերցնելով Յովաքանանի գլուխը գնացին դէպի Գալիլիա:

Եւ որովհետեւ շատ ծանր էր, ուստի տանում էին հերթով:

Թարգմ. Մաթ. Եպ.